102. ԹԱՔԱՎԵՐԵՆ ԱԽՃԻԳՅԸ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին թաքավեր ա իլա՛լ։ Տղեն փսկվելի վախտը եկալ ա։ Հա՛րը փսակալ չի, տղան էլ համանչալ ա, թա՛ հորը ասե՝ փսակվում ըմ։

Ախրը վեր հորան հույսը կտրալ ա, մին հա՛յրա՛ վրեսկե յա եր կալալ հղե ընգալ քյեցալ։

Քյեցալ ա, քյեցալ, մին կընդակ պռավու տան ղոնաղ ընգալ։ Ուռութանա վեր էտ տղան եր ա կացալ, թա՛ իրեսը լվանա, տեսալ ա մին շափաղ ընգած ընդղերքեն։

Էտ տղան ասալ ա. — Ա՛ նանի, էս հի՞նչ պեն ա, տրեռ իրիքյ-նակը տո՛ւս կյալու, շափաղը տրվալ ա ըստրղեքյես։

Պառավն ասում ա. — Ջանըս քյը մատաղ, հա՛լրա՛թ թաքա-վերեն ախճիգյը տո՛ւս ա եկալ տո՛ռնը։

Տղան ասում ա. — Ա՛ նանի, ա՛մա՛լ պեր թաքավերեն ախճիգյը ինձ հետե օղինքյ։

Պառավն ասում ա.— Ջանս քյը մատաղ, թաքավերը ըխճկանը փսակում չի՞, հու վեր կյամ ա, թա՛ օղի, կոնդը կտրում ա։ Էն ա մին տոն կլխավ լցած։

Էտ տղան սուս ա անում։

Ըտեղ մին դա՛մուրչի յա ինո՛ւմ։

Էն տղան վրեսկե յա տամ, թա՛.— Ինձետե քսան մեխ շինի, մին կյեղ, էրկան, մաննես մչանք հաստեգյ։

Դա՛մուրչին մեխերը շինում ա, պիրում տամ էտ տղեն։ Էտ տղան

տանում ա քշերը մեխերը թաքավերեն պըլատեն, ըխճըկանը թը-ռա̈փե պատեն թխում, եր ինո̈ւմ, քյինո̈ւմ թաքավերեն ըխճկանը ծեռքըլալեխը կյուղանում, պո̈ւրում։

Էն մին քշերն էլ քյնում ա մուտանան կյուղանում, պո̈ւրում։ Իրեքինջի քշերը քյինում ա թաքավերեն ըխճկանը եր կցնում։

Ախճիգյն ասում ա. — Պա տու հո̈՞ւ վըս, հի՞նչ ըս, վեր եկալ ըս ըստեղ։

Էտ տղան ասում ա.— Ըսկացալ ըմ, թա̈ քու հա̈ր քյըեզ փսա-կում չի, իմ հա̈ր էլ ինձ չի փսակում, եկալ ըմ, թա̈ քյըեզ օզիմ։

Էտ ախճիգյն ասում ա.— Քյինի, էքյուց ո̈ւրո̈ւգյո̈ւնը կկյաս։

Թաքավերեն տղան քյինում ա, էքյսը էտ ըխճկանը յոր օնում, քյինում բիդի ո̈ւրա̈ն հորը տոնը։

Քյինում ըն։ Կըսըհըղե էտ տղեն մենն ա ընգնում, վեր հա̈յ-քա̈ն վըեսկավ լիգյը թողալ ա պռավեն տանը։

Էտ տղան ասում ա.— Յըես քյինիմ պիրիմ։

Ախճիգյն ասում ա.— Չէ՛, յըես քյինիմ։

Վերչը ախճիգյը թողում ա ըտեղ, ինքյը քյինում, թա̈ հա̈յրա̈ն պիրի։ Մթնում ա, էտ ախճիգյը վեր մըսում ա, մին ծառե տակե կոչ ա կյամ։

Մին լոթկաչի կյամ ա, թա̈.— Ա՛ քո̈ւր, ըտեղ խե՞ մըսում ըս, եք լոթկումը նստե դըլըդալու անինքյ, հանցու մըսխս վեչ։

Էտ ախճիգյը քյնո̈ւմ ա լոթկումը նստում, լոթկաչին լոթկան քշում ա ո̈ւրանց տո̈ռնը։ Էտ լոթկան կապ ա տամ, ո̈ւրա̈նք քյինո̈ւմ ըն տոն։

Թաքավերեն ախճիգյը էտ լոթկաչուն ասում ա.— Ծըեզ վե-տաց ճընապարհ չօնի՞քյ։

Լոթկաչին ասում ա. — Էն ա օնինքյ, ամմա քյըեզ կնդակ պեց չըմ թողել, քյըեզ նհետ կկյամ, հանցու փախչիս վեչ։

Էտ լոթկաչին ասում ա, թա̈ նհետը քյինի, ախճիգյն ասում ա. — Վեր վախում ըս, թա̈ կփախչիմ, մին քյինդիրա̈վ վըեննըս կապե։

Պիրում ա քյինդիրա̈վը վըեննան կապում, ճոնդը փռնում։ Էտ ախճիգյը քյա̈նդիրը վըեննան ետ ա անում մին քոլա կապում, ինքյը լոթկան եր ինո̈ւմ քյինո̈ւմ, տո̈ւս կյամ էն համան տեղը, հիշտեղ վեր թաքավերեն տղան թողալ ա։ Լոթկան մին կեռա կապ ա տամ ինքյը ընդեղ նստում։

Մին մարթ ա կյամ, մին թվանգյ ծեռքեն, բիդի էտ ախճիգյը։

Կյամ ա մուտանում, թա̈.— Պա տու հի՞նչ խըլա̈թ միլլա̈թ ըս, վեր ըստեղ ըս։

Էտ ախճիգյը իմաստուն ա ինո̈ւմ, գյուդո̈ւմ ա, վեր տա լը̈ա̈ թաքավէրն ա, վըերսի չա եկալ։

Ասում ա. — Յըես ըսկացալ ըմ, վեր ծեր թաքավէրեն երեսունը֊ինը կնեգյ օնե, յըես էլ եկալ ըմ վեր հանցու քառասունը տեռնանք։

Էտ մարթը ասում ա.— Դե եք քյինինքյ։

Ախճիգյը ասում ա. — Չէ՛, թող թաքավէրեն կնանեքյը ո̈ւրա̈նց գլխլիմավը, պարիպասավը կյան ըստեղ, ոտինքյ, խմինքյ, քյեփ անինքյ, ետնան կյանքյ։

Էտ մարթը քյնում ա կնանուցը ըղարկում, ըտեղ օտում ըն, խմում, պըծնում, էտ ախճիգյը ասում ա.— Եկեք տանիմ նշանց տամ, տեսեք հի՞շտեղա յըմ եկալ։

Տանում ա էն երեսունինննը կնեգյը անում լոթկան, քշում քյինում։ Վեր մթնում ա, լոթկան կապում ա մին կեռա, ո̈ւրա̈նք ծմակումը կենում ըն։

Քառասուն օշափ ըն կյամ, թա̈. — Տուք հո՞ւ վըք։

Էն ախճիգյն ասում ա. — Մունք քառասուն հոքի յընք, ըսկացալ ընք, վեր տուք էլ քառասուն օշափ ըք, եկալ ընք ծըեզ կնանեքյ։

Օշափնեն ասում ըն. — Դե քյինինքյ մեր տները։

Էն ախճիգյն ասում ա. — Քյեցեքյ կյինի, ա̈րա̈ղ, հաց, տեստեն պերեքյ, ոտինքյ, քյեփ անինքյ, ետնան։

Էտ օշափնեն ամմեն օր մին մոտե շեն ա ինո̈ւմ, թլանում ըն։ Էլհա յըն քյինում նի տեռնում էտ շենը թլանում, յոր օնում, կյամ։

Էտ ախճիգյը ընգահանց քմակեն երեսունըիննը կնգանը սվըր֊ցնում ա, թա̈. —Ծըռքըռնումտ մարթը մին քար կտինիքյ, վեր կյինի տան, խմիքյ վեչ, էն ղոլավը վեր կածիքյ։ Մարթը ո̈ւրա̈նեն թուշին նստլական ընք, վեր հա̈րփին, ղմենեն յոր կօնիքյ, մարթը ծեր թուշին նստածեն ըսպանիքյ։

Ուշուփնեն կյամ ըն, օտում, խմում, ուրուգյունը վեր տեռնում։ Էտ կընանեքյը եր ըն կենում մարթը ուրա̈նց թուշինին ըսպանում։ Էն ախճիգյն էլ ուշուփներեն մեծեն ա սպանում։ Ըտահանք ուշուփնուն շո̈րերը կյէնում ըն։ Էն ախճիգյն էլ ընգրանց մեծէն շա̈րերն ա կյենում, ուշուփներեն մեծեն կլո̈խը կտրում, յոր օնում քյինում էն հա̈մա̈ն շենը, վեր ուշուփնեն թլնեյիս ըն իլա̈լ։

Ժողովուրթը գյիդում ա, թա̈ ուշուփնեն ըն, էլհա եկալ ըն։ Լոխ կյողլ ըն կենում, ասում ըն. — Էս հի՞նչ պեն ա՛, վեր միչև մհենգյ օրը մեհետ ըն իլա̈լ կյալիս, մհենգյ էլ օրը էրկու հետն ըն կյամ։

Էտ կնանեքյը շատ հա՛յ-հա՛յ ըն անում, վեր ո̈ւրա̈նք ուշուփնե

չրն, ուշուփնեն կտորողրն ըն, ընդրանք հվատում չը՞ն։ Էրկու պռավե ըղարկում ըն ընդահանց կոշտը։

Պովնեն վեր տեսնում ըն ուշուփնուն մեծեն կլոխը կտրած, հվատում ըն, վեր ուշուփնուն կտորողնեն ըն։

Էտ շենին ժողովուրթը էտ ըխճկանտ թաքավեր ա տինում։

Էտ ախճիդյը ուրան հորը տանան կյեցած շորերրավը նկարվում ա, տամ ղրրղան, քշտեն էլ մին ախպուր տուս օնըմ, մին մարթ տինում բանդ, թա.— Հու վրեր կյա էտ նկարեն եշի, կփռնիս, պիրիս։

Մնհետ մին մարթ կյամ ա նկարեն եշում, ուշունց տամ, թա— Տու քյեցեր հերիք չի, լոթկաս էլ տարեր։

Էա մարթը ըտրան փռնում ա, տանում էտ ըխճկանը կոշտը, թա. — Իստի յա ասալ։

Էտ ախճիդյը ասում ա.—Տարեքյ քցեցեքյ տակե պադվալը, օրը իրեք հետ թկեցեքյ։

Մին մարթ էլ կյամ ա, թա.— Տու քյեցեր հերիք չի, երեսունը-ինը կնեգյս էլ տարեր։ Ըտրան էլհա փռնում ըն, տանում։

Էն ախճիդյը ասում ա.— Տարեքյ քցեցեքյ մաչի հարկը, օրը էրկու հետ հաց տվեքյ։

Մին տղա կյամ ա, նկարեն եշում, ուրանան քյինում, վեր ընգ-նում։ Ընտրա էլ ըն տանում։

Էտ ախճիդյն ասում ա. — Քցեցեքյ երե հարկը, օրը իրեք հետ հաց տվեքյ։

Էն լոթկաչուն, վեր նկարեն ուշունց ա տվալ, թիքյա-թիքյա կտորում ըն։ Էն մինն էլ թաքավեր ա ինում, ուրան երեսունըինը կնեգյը տամ ա ուրան։ Էն ուրանան քյինողն էլ, ուրան նշանածն ա ինում, նհետը փսակվում ա։

Ըտրանք հասեն ուրանց մուրաղեն, տուք էլ հասնիքյ ծեր մուրադեն։